

Հ Ա Յ Տ Ա Ր Ա Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն



Հայաստանի Հանրապետության Կրթության և գիտության նախարարության Գավառի պետական համալսարանը հայտարարում է 2016-2017 ուսումնական տարվա մագիստրատուրայի ընդունելություն: Ընդունելությունն անցկացվում է 2 փուլով: 1-ին փուլով մագիստրատուրայի ընդունելությունն անցկացվում է հունիսի 5-ից մինչև հունիսի 20-ը, որին կարող են մասնակցել միայն բակալավրիատի կամ դիպլոմավորված մասնագետի կրթական աստիճան ունեցող շրջանավարտները: 2-րդ փուլով մագիստրատուրայի ընդունելությունն անցկացվում է մինչև ընթացիկ տարվա սեպտեմբերի 1-ը:

Դիմորդները դիմում-հայտի հետ ներկայացնում են՝

- 1) բարձրագույն կրթության դիպլոմի և նրա հավելվածի բնօրինակն ու պատճենը,
- 2) երաշխավորագիր ֆակուլտետի խորհրդից (նախորդ տարիների շրջանավարտները երաշխավորագրեր չեն ներկայացնում),
- 3) 3 լուսանկար (3 x 4 սմ չափսի),
- 4) ինքնակենսագրություն,
- 5) անձը հաստատող փաստաթուղթը և պատճեն,
- 6) զինվորական ծառայության առնչության վերաբերյալ փաստաթուղթը և պատճեն,
- 7) հրատարակված գիտական աշխատանքների ցուցակ (դրանց առկայության դեպքում),
- 8) ՀՀ օրենսդրությամբ սահմանված հատուկ արտոնություններից օգտվելու մասին փաստաթուղթը և պատճեն (հաշմանդամության վերաբերյալ տեղեկանք, եթե հավակնորդը I կամ II խմբի հաշմանդամ է, մինչև 23 տարեկան երկկողմանի ծնողագուրկ, զոհված զինծառայողի երեխա լինելու մասին փաստաթղթեր),
- 9) ընդունելության ծառայությունների համար սահմանված 3000 դրամի վճարի անդորրագիր:

Փաստաթղթերի ընդունման ժամկետը լրանալուց հետո դիմորդների կողմից լրացուցիչ փաստաթղթեր ներկայացնելն արգելվում է: Քննություններին և մրցույթին մասնակցելու դիմում-հայտը փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտից հետո փոփոխման ենթակա չէ:

Հասցե՝ ՀՀ, Գեղարքունիքի մարզ, ք. Գավառ, Հրանտ Հակոբյան 1, 1201

ԳՊՀ գլխավոր մասնաշենք, 2-րդ հարկ, 219 սենյակ:

Հեռախոս՝ 0264 2-57-75, 060-46-12-42, 060-46-04-03

ԳՊՀ ընդունող հանձնաժողով